ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2013 թ. թիվ 6/1698/

15. ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ների տնօրենների նոր խմբագրությամբ ընտրակարգի հաստատում

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հաստատել ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ-ների տնօրենների նոր խմբագրությամբ ընտրակարգը / ընտրակարգը կցվում է/:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ ԳԱԱ
Նախագահության 2013 թ. նոյեմբերի 20-ի
թիվ 6/1698/-15 որոշմամբ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ընտրակարգ

1. ՀՀ ԳԱԱ կազմում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների /տնօրենների/ թափուր պաշտոնի համար ընտրություններն իրականացվում են “Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի մասին” օրենքի, “Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին” օրենքի, ՀՀ ԳԱԱ կանոնադրության, ՀՀ ԳԱԱ համակարգում ներառված ՊՈԱԿ-ների օրինակելի կանոնադրության համապատասխան և սույն ընտրակարգով:

2. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ընտրակարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ Նախագահությունը: Ընտրակարգը սահմանում է տնօրենի պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և տնօրենին պաշտոնում հրամանագրման կարգը:

3.Պետական կազմակերպության գործադիր մարմնի /տնօրենի/ թափուր պաշտոնի համար ընտրություն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում:

4. Տնօրենի պաշտոնի թեկնածություններն առաջադրվում են օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող անձանց թվից և պետք է ունենան գիտական աստիճան, ընտրության պահին լինեն 65 տարեկանից ցածր տարիքի, ունենան գիտակազմակերպական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ համապատասխանեն գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

5. Կազմակերպության տնօրենի ընտրությանը մասնակցելու համար մեկական թեկնածու առաջադրելու իրավունք ունեն՝ համապատասխան բաժանմունքի բյուրոն, կազմակերպության գիտական անձնակազմը և տվյալ մասնագիտության գծով ՀՀ ԳԱԱ-ի անդամները:

6. Բաժանմունքի բյուրոյի և գիտական անձնակազմի ժողովի կողմից առաջադրվող թեկնածուները որոշվում են փակ գաղտնի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

7. Թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին՝ ընտրության մասին հայտարարության հրապարակման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Առաջարկություններին կցվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում

բ) առաջադրումը հաստատող փաստաթուղթ

գ) լուսանկար

դ) քաղվածք աշխատանքային գրքույկից

ե) ինքնակենսագրություն

զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն

է) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն

ը) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված)

թ) տեղեկանք մշտական բնակության վայրից

ժ) հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկը

ժա) գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)

ժբ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)

ժգ) կազմակերպության զարգացման ծրագիր:

8. Բաժանմունքի բյուրոյի և ՀՀ ԳԱԱ անդամների կողմից առաջադրումների դեպքում ներկայացված բոլոր թեկնածուները նախնական քննարկում են անցնում տվյալ կազմակերպության գիտական անձնակազմի ժողովում և փակ գաղտնի քվեարկության արդյունքները ներկայացվում են համապատասխան բաժանմունք:

Եթե առաջադրվում է միայն մեկ թեկնածու՝ կազմակերպության գիտական անձնակազմի կողմից, նոր քննարկում չի անցկացվում:

9. Բաժանմունքի ընդհանուր ժողովը, որին կարող են մասնակցել նաև համապատասխան կազմակերպությունների գիտական անձնակազմի ներկայացուցիչները /ոչ ավել, քան 5 գիտաշխատող/, քննարկում է առաջադրված բոլոր թեկնածությունները: ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը բաժանմունքի ընդհանուր ժողովի քննարկման արդյունքների մասին զեկուցում է ՀՀ ԳԱԱ Նախագահությանը:

10. Նախագահության նիստին նախագահողը ներկայացնում է թեկնածուների ցուցակը: Թեկնածուների ներկայությունը պարտադիր է: Բացակայող թեկնածուի մասին՝ լսելով նախագահողի պարզաբանումները, նախագահությունն ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

Ներկայացված թեկնածությունները քննարկվում են ՀՀ ԳԱԱ Նախագահությունում՝ կազմակերպության գիտական անձնակազմի ներկայացուցիչների / ոչ ավել, քան 5 գիտաշխատող / ներկայությամբ:

11. Քննարկումից առաջ թեկնածուները ներկայացնում են կազմակերպության գիտական և գիտակազմակերպական աշխատանքների ծրագրերի վերաբերյալ իրենց առաջարկությունները: Թեկնածուների ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը: Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ Նախագահության որոշմամբ:

12. Քննարկումից և լրացուցիչ ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների ազգանունները Նախագաության որոշմամբ մտցվում են քվեաթերթիկ:

13. Նախագահի առաջարկով փակ /գաղտնի/ քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար Նախագահության որոշմամբ նախագահության անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս /կենտ թվով/ հաշվիչ հանձնաժողով:

Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

14. ՀՀ ԳԱԱ Նախագահության յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել միայն մեկ թեկնածուի օգտին:

15. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, ապա Նախագահությունը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

Ընտրված է համարվում ձայների պարզ մեծամասնությամբ առավելագույն ձայն ստացած թեկնածուն: Ընտրության արդյունքների վերաբերյալ ընդունվում է ՀՀ ԳԱԱ նախագահության որոշում: Եթե քվեարկության երեք փուլերում թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում համապատասխան թվով ձայներ, ընտրությունը համարվում է չկայացած:

17. Նախագահությունը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակումից հետո ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
ա/ տնօրեն ընտրվելու մասին, բ/ կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին, գ/ ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

18. Ընդունված դրական որոշման հիման վրա ՀՀ ԳԱԱ նախագահը հրամանագրում է կազմակերպության տնօրենին /գործադիր մարմնին/ և նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

19. Տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նախագահությունը նշանակում է տնօրենի նոր ընտրություն՝ սույն ընտրակարգի համաձայն: